«ՄԵՆՔ ԱՂՈԹՈՒՄ ԵՆՔ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ»

(Տպավորություններ Ս. Էջմիածնեն)

Էջմիածնա Ս. Տաճարի կողքին, Վեհարանին մեջ, Նորին Ս. Օծություն Տ. Վազգեն Ա-ի պարթև հասակը, վեհ կեցվածքը և բարի նայվածքը տակավին աչքերուս առջև է։ Ս. Լուսավորչի և իր արժանավոր հաջորդներուն ներկայացուցիչ Հայրապետին խոսքերը կարծես երկինքեն իջած՝ միշտ կհնչեն ականջիս. «Մենք աղոթում ենք բոլորի համար, աշխարհի խաղաղության համար»։

Արդարև բախտավոր են բոլոր անոնք, որ առանձնաշնորհումը ունեցած են Հայաստան և Էջմիածին այցելելու, ծանոթանալու Վեհափառին և լսելու Իր իմաստուն պատգամները։ Ավելի բախտավոր են անոնք, որ Հայաստանի մեջ Իր հովանիին տակ կապրին և առիթը կունենան միշտ մտիկ ընելու խոհական, քրիստոնեական ու հայրենաշունչ քարոզները։ Իսկ սիյուռքի հայրենաբաղձ այն ուխտավորները, որ մենաշնորհը ունեցան տեսնելու և ունկնդրելու Հայ Աղգին հոգևոր պետը, երանելիներ են։ Երանելիներ անոր համար, որ հեռավոր երկիրներեն կրցած են արժանանալ ծաղկյալ ու շենցած Մայր Հայրենիքը այցելել ու ծնկաչոք աղոթել Մայր Տաճարին մեջ ու փառք տալ ներկա վերածնյալ Հայաստանին համար։

Տարակույս չկա, որ վերջին քանի մը տարիներու ընթացքին այցելող ուխտավորներ, ինձի նման ապրեցան հոգեկան անկարագրելի հույզեր ու ամրապնդեցին իրենց հավատքը Ս. Էջմիածնա անմար կանթեղին համար։ Եվ սակայն, ի՜նչ մեծ ազգային հպարտություն կզգա ուխտավորը, երբ աչքերովը կտեսնե բարձր իմացականությամբ օժտված, տաղանդավոր մտավորական Հայրապետը և կունկնդրե անոր հայրական հորդորները։

Գերերջանիկ փորձառություն մըն էր այցելել մեր չքնաղ Հայաստանը ու հոգեպարար պահ մըն էր աղոթել Ս. Էջմիածնա Տաճարին մեջ և անէանալ հոգեմայլ շարականներու երգեցողությամբ։ Ամեն կիրակի հայաստանյայց եկեղեցիներու մեջ սուրբ պատարագին երգված «Տուր աշխարհիս խաղաղություն»-ը կարծես երբեք այդքան քաղցրալուր ու աղերսական չէր հնչած։ Եվ այնպես կթվեր, պահ մը, որ հայուն այդ աղոթքը միայն կըրնար հասնիլ Երկինք։ Կարծես խոր հաղորդակցություն մը կար Երկինքին և Ս. Էջմիածնա միջև։

Թերևս երանելիներուս թիվը այնքան խոշոր չէ, սակայն ապահովաբար մենք կըրնանք հասնիլ աշխարհիս ամեն կողմը ու բաժնեկից ընել մեր կրած բարձր ներշնչումներուն ու ըլլալ նաև անխորտակելի կապը Ս. Էջմիածնա և Սփյուռքի հայության միջև։ Ուխտավորի մեր նվիրական հանգամանքը այն ատեն միայն արժեցուցած պիտի ըլլանք։ Մեզի, երանելիներուս համար, սուրբ պարտականություն մը պետք է ըլլա կրկնել Էջմիածնա հանդեպ մեր հավատարմության ուխտը ամենուրեք, միշտ խոսքով և գործքով։

Դժբախտաբար ամենուն վիճակված չէ երանելի ըլլալ և այցելել Էջմիածին, սրբավայրերը Գառնի, Գեղարդ, Օշական և Ս. Գայանեի, Ս. Հռիփսիմեի, Զվարթնոցի և այլ վանքերը։ Սակայն, անոնց և մեր միջև կա հոգեկան անքակտելի շղթան՝ օղակված ճշմարիտ հայրենասիրությամբ, անխախտ հավատքով և նորանոր լուսաշող հույսերով։ Այս թանկագին արժեքներու զորությանը շնորհիվ միայն աշխարհը պիտի ճանչնա հայուն անխորտակելի կամքը ապրելու, ստեղծագործության ուժը ու մշակույթին հզորությունը։

Որքան որ ալ հեռու ենք Մայր Հայրենիքեն, մեր սրտերն ու հոգիները սերտորեն կապված են մեր դարավոր սրբությանը։ Եթե կցանկանք, որ անոնք ըլլան մշտահոս աղբյուրները մեր հավատքին ու հպարտության, պարտինք մենք ալ անոնց հանդեպ

մեր պարտականությունները խղճմտորեն կատարել։

Բաղձալի է, որ ամեն տարի ուխտավորներու մեծ թիվ մը շարունակեն այցելել Մայր Հայրենիքը և Ս. Էջմիածինը ոչ թե միայն ապացուցանելու մեր սերը, այլ հավատքի նոր ավյունով վերականգնելու և զայն ներարկելու գաղթաշխարհի մեր ազգակիցներուն։

Օտար երկինքներու ներքև ապրած հայերուս կմնա Էջմիածնա անունով եղած բոլոր կոչերուն բերել մեր բարոյական և նյութական օժանդակությունը և ծառայել Մայր Աթոռին հետ կապված մեր եկեղեցիներուն և առաջնորդարանին։ Գուրգուրանքով անսալ առաջնորդ գերաշնորհ Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի և հոգևոր հայրերուն հրահանգներուն։ Այսպես մենք գոհ պիտի թողունք Հայոց Հայրապետը և արժանանանք Իր օրհնությանց։

Այն ատեն միայն արժանի պիտի ըլլանք մեր պատկառելի Հայրապետին աղոթքներուն, երբ Ան կրկնե. «Մենք աղոթում ենք բոլորի համար, աշխարհի խաղաղության համար»։ Այն ատեն միայն մենք ալ հանդարտ խղճով կրնանք պատասխանել։ Մենք ալ կաղոթենք Ձերդ Ս. Օծության արևշատության և ձեզ հետ աշխարհի խաղաղության համար։

ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՈՒՅՈՒՄՃՅԱՆ

(Նյու-Յորք, Ամերիկայի հայոց առաջնորդարանի պաշտոնաթերթ «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԵԿԵՂԵՑԻ» ամսագիր, № 9, հոկտեմբեր, 1959 թ.)